

Հաստատված է կրթահամալիրի խորհրդի 2018թ. մայիսի 22-ի նիստում:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց
 2018-2019 ուսումնական տարի, առաջին և երրորդ շրջան
 10-12-րդ դասարաններ
 Ուսումնական պլան

Ուսումնական դասընթացներ	Շաբաթական		
	X	XI	XII
Ընդհանուր բաղկացուցիչ			
Հայոց լեզու	2	2	4
Գրականություն	2	2	3
Մաթեմատիկա և ինֆորմատիկա ¹	2 կամ 6	2 կամ 6	4 կամ 6
Բնագիտություն և էկոլոգիա	2	2	-
Պատմություն	2	2	4
Հասարակագիտություն	2	2	-
Արվեստ	2	2	4
Օտար լեզու ²	4 կամ 6	4 կամ 6	4 կամ 6
Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ	3	3	2
Ռազմամարզական ճամբար	5 օր	5 օր	-
Մասնագիտական կողմնորոշում	1	1	
Սովորողի ընտրությամբ բաղկացուցիչ	8-12	8-12	4-8
Ընդամենը	30-34	30-34	մինչև 33 ժամ

Ուսումնական պլանի պարզաբանումներ

1. Ուսումնական պլանը հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելվածն է:
2. 10-12-րդ դասարան [սահմանված կարգով](#) ընդունվում է հիմնական կրթություն ունեցող համապատասխան դասարանի սովորողը, որ ընտրում է Ծրագիրը, կատարում

¹ Սովորողը 10-11-րդ դասարանում ընտրում է «Մաթեմատիկա և ինֆորմատիկա» շաբաթական 2 կամ 6, 12-րդ դասարանում՝ 4 կամ 6 ժամանոց դասընթացներից մեկը:

² Օտար լեզուներից՝ անգլերեն, գերմաներեն, թուրքերեն, իսպաներեն, ռուսերեն, վրացերեն, ֆրանսերեն, պարսկերեն, սովորողն ընտրում է մեկը՝ շաբաթական 4 կամ 6 ժամանոց դասընթաց:

ընդունելության պահանջները, [սահմանված կարգով](#), կնքում պայմանագիր ուսումնառության մասին:

3. Սովորողի ուսումնական գործունեությունը կազմակերպվում է անհատական ուսումնական պլանով, որը [սահմանված կարգով](#) կազմվում է ուսումնական յուրաքանչյուր շրջանի համար՝ հիմք ունենալով սույն ուսումնական պլանը և ուսումնական շրջանի առանձնահատկությունը:
4. Տևական շրջան Հայաստանից բացակայած սովորողների համար սահմանված կարգով կարող է կազմակերպվել անհատական ծրագրերով ուսուցում:
5. Ընդհանուր բաղկացուցիչով ուսումնական պարապմունքը կազմակերպվում է 20-25 հոգիանոց խմբով: Սովորողի ընտրությամբ դասընթացի պարապմունքը կազմակերպվում է 8-15 հոգիանոց խմբով: Սովորողի նախասիրության զարգացման ակումբը կազմակերպվում է 12-25 հոգիանոց խմբով: Կրթահամալիրի տնօրենի որոշմամբ կարող են գործել ավելի փոքրաքանակ խմբեր՝ կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցների հաշվին:
6. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանցում փոփոխությունները դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
7. Ուսումնական տարվա առաջին շրջանը սկսվում է 2018թ.օգոստոսի 30-ից: Այն կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, ակումբի, սովորողի ընտրությամբ գործունեության, լրացուցիչ կրթության) [ուսումնական օրացույցով](#): Դրանցով որոշվում են ուսումնական շրջանները, պարապմունքները, ճամբարները, ստուգատեսները, ծեսերը, տոները, ստեղծագործական այլ հավաքները, ուսումնական արձակուրդները:
8. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական [թվային միջոցներով](#): Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական ներթուրք-նոթրուքով կամ պլանշետով, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար համացանցից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
9. [Մեդիագրադարանը](#), դպրոցական գրադարանը, դասավանդողների և սովորողների բլոգները, ամսագրերը սովորողին [սահմանված կարգով](#) տանը և դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
10. Ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պարապմունքների տարբեր ձևերի, ուսումնական նախագծերի մշակման և իրականացման, ուսումնական ճամփորդությունների, ճամբարների, ստուգատեսների միջոցով:
11. Ուսուցման կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում են [հեռավար](#), [առցանց](#), տնային ուսուցման ձևեր:
12. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, ճամբարներին, ճամփորդություններին, ստուգատեսներին, ֆլեշմոբներին, նախագծերին մասնակցությունը, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում: Դասավանդողի գործունեության արդյունքները նույնպես [սահմանված կարգով](#) էլեկտրոնային գրանցում են ստանում:

13. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերն իրականացվում են [սահմանված կարգով](#):
14. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության, ակումբային պարապմունքներ, հայրենագիտական, [ուսումնական ճամփորդություններ](#), իրականացվել ուսումնական-հասարակական նախագծեր:
15. Ծրագրի ամենօրյա 15 րոպե տևողությամբ ընդհանուր պարապմունքը՝ [սահմանված կարգով](#) և ծրագրով, սովորողի համար լրացուցիչ կրթական ծրագիր է:
16. Սովորողն ունի ուսումնական բլոգ, որում սահմանված կարգով արտացոլվում է նրա ուսումնական գործունեությունը:
17. Անձնական ուսումնական բլոգի (կայքի) [սահմանված կարգով](#) վարումը սովորողի և դասավանդողի պարտադիր ուսումնական աշխատանք է:
18. Կրթահամալիրի, ավագ դպրոցի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը սովորողի ուսումնական աշխատանք է:
19. Ուսումնական պարապմունքները կազմակերպվում են հիգիենիկ, այդ թվում՝ բացօթյա, միջավայրում:
20. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական ներքին և արտաքին տարածքների, գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունք են:
21. [Սահմանված կարգով](#) իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների, ակումբային գործունեության, նախագծերի բաղկացուցիչն են:
22. Սովորողի ընտրությամբ և լրացուցիչ կրթության դասընթացները, ակումբները կազմակերպվում են կրթահամալիրի ուսումնական կենտրոններում, լաբորատորիաներում, արվեստանոցներում, արհեստանոցներում: Սովորողն ընտրում է առաջարկվող ցանկից՝ անգլերեն, գերմաներեն, թուրքերեն, իսպաներեն, ռուսերեն, վրացերեն, ֆրանսերեն, պարսկերեն, հայոց լեզվի քերականություն, աշխարհագրություն, կենսաբանություն, ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, քիմիա, ֆիզիկա, գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, գծագրություն-նախագծում, քանդակ, դերասանի վարպետություն, բեմական խոսք, համակարգչային գրաֆիկական ծրագրեր, մուլտիպլիկացիա, մոնտաժ, լուսանկարչություն, օպերատորական գործ, ռեժիսուրա և բեմական գործ, սոլֆեջիո, կերպարվեստ և դիզայն, խեցեգործություն, ոսկերչություն, կար և մոդելավորում, գործվածք-գորգ-կարպետագործություն, հասարակական սնունդ, համակարգիչների շահագործում, վարսավիրություն և դիմահարդարում, հրատարակչական գործ, պարտեզապուրակային գործ, ատաղձագործություն, երկրագործություն: Սովորողի ընտրությամբ օտար լեզուն չի կարող լինել ընդհանուր բաղկացուցիչում ընտրածը:
23. Սովորողը կարող է ընտրել նաև [ակումբային գործունեություն](#) առաջարկվող ցանկից՝ «Լեզվաբանի», «Ընթերցողի», «Անգլիախոսի», «Հայրենագետ-էկոլոգ-աշխարհագետի», «Գիտակների», «Ֆիզիկոս-աստղագետի», «TV mskh», «Բոբոտիքս», «Հոգեբանի», «Երգչախումբ», «Երաժշտական լաբորատորիա», «Անիմացիոն լաբորատորիա», «Արվեստագետի», «Լանդշաֆտային դիզայն», «Թատրոն», մարզական, ձևավորել նոր ակումբ:
24. Սովորողը տնային պարտադիր առաջադրանքներ ստանում է ըստ իր անհատական ուսումնական պլանի, սահմանված կարգով:

25. 10-11-րդ դասարանի սովորողն ընդհանուր բաղկացուցիչից, ընտրությամբ դասընթացներից և լրացուցիչ ուսուցումից կազմում է իր անհատական ուսումնական պլանը՝ շաբաթական 33-37 ժամ ծանրաբեռնվածությամբ:
26. 12-րդ դասարանում, բացառությամբ սովորողի կողմից ընտրված առարկաների, ուսումնական պլանով որոշված մյուս առարկաների և դասընթացների ուսումնասիրությունն ավարտվում է առաջին կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ: Սովորողի ընտրությամբ նախնական մասնագիտական ուսուցման պետական որակավորումն իրականացվում է սահմանված կարգով:
27. Սովորողի ընտրությամբ նախնական մասնագիտական ուսուցման պետական որակավորումը իրականացվում է [սահմանված կարգով](#):
28. Լրացուցիչ ուսուցման դասընթացներն ուղղված են հայաստանյան, արտասահմանյան բուհի ընդունելության առարկայական նախապատրաստությանը, ներառում են այլ ուսուցում: Լրացուցիչ ուսուցման դասընթացների կազմակերպման համար սովորողի (ծնողի) հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր: Սովորողը լրացուցիչ ուսուցում կարող է ընտրել կրթահամալիրից դուրս:
29. «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացը կազմակերպվում է [սահմանված կարգով](#):
30. «Արվեստ» առարկան կազմակերպվում է երաժշտության, պարի ուսուցման, արվեստի տարբեր տեսակների վերաբերյալ ուսումնական նախագծերի, ծեսի, տոնի, համերգի, ցուցադրության կազմակերպման ուսումնական նախագծերի միջոցով:
31. «Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ» առարկան սովորողի ընտրած անհատական կամ թիմային մարզաձևի պարապմունքներն են, մրցումները: Սովորողին առաջարկվող մարզաձևեր են հնգամարտ, նետաձգություն, սուսերամարտ, մարմնամարզություն, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ձեռքի գնդակ սեղանի թենիս, հեծանվավարություն (սովորողի անհատական հեծանվով): Որպես լրացուցիչ ուսուցում՝ սովորողը կարող է ընտրել լող, եռամարտ: Կրթահամալիրում կամ կրթահամալիրից դուրս որևէ մարզաձևի լրացուցիչ կրթության ծրագրում ընդգրկված սովորողը կարող է կրթահամալիրում մարզական-ակումբային պարապմունքների չմասնակցել: Սովորողը անվտանգ գործունեության հմտություններ ձեռք է բերում քայլարշավների, բարձունքներ հաղթահարելու, վրանային ճամբարների ժամանակ:
32. 10-11-րդ դասարաններում «ՆԶՊ և արտակարգ իրավիճակներ» առարկան կազմված է «Առաջին բուժօգնություն», «Քաղացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ», «Նախազորակոչիկի իրավունքներ և պարտականություններ», «Զինվորական կարգապահություն և զինվորի որոշ հմտություններ» դասընթացներից: «Նախազորակոչիկի իրավունքներ և պարտականություններ» դասընթացը ընդգրկված է 11-րդ դասարանի «Հասարակագիտության» ծրագրում: Մյուս դասընթացները կազմակերպվում են գործնական եղանակով, ռազմա-մարզական հավաքների, խաղերի, ճամբարների ընթացքում:
33. Ուսումնական գործունեության ընթացքում սովորողն զարգացնում է գիտելիքներ տեղեկույթի, դրա ստացման, մշակման, պահպանման, փոխանցման մասին. ստեղծում է էլեկտրոնային ուսումնական նյութ, ֆիլմ, ռադիոնյութ. սովորում է գնահատել

համացանցում ներկայացված տեղեկատվության վստահելիությունը, վարում է իր ուսումնական բլոգը, կիրառում է համացանցում աշխատելու բարոյական նորմերը: Չարգանում են համակարգչային ծրագրերով, համացանցային տարածքներում աշխատելու կարողությունները:

34. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և [սահմանված կարգով](#) ներկայացվող էլեկտրոնային հաշվետվություններում:
35. Կիրառվում են գնահատման տարբեր ձևեր, որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի: Սովորողի սեպտեմբեր-դեկտեմբեր ուսումնական գործունեության՝ [սահմանված կարգով](#) կատարվող գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքները (այդ թվում՝ ինքնաստուգումներ, ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ, հեռավար առաջադրանքների կատարում, հետազոտական-ստեղծագործական աշխատանք, ուսումնական կայքի աշխատանք, ուսումնահասարակական նախագծեր, ուսումնական ճամփորդություններ, հայրենագիտական արշավներ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցություն, լրացուցիչ կրթություն): Սովորողի ուսումնական գործունեության գնահատումը կատարվում նրա ուսումնական բլոգում տեղադրված աշխատանքների հիման վրա: Խրախուսվում է սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը և հրապարակայնացումը մեդիայի միջոցով:
36. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները, այդ թվում 12-րդ դասարանցիների լրացուցիչ կրթության, ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում, համերգներում, մրցումներում: